

# Ինչպես կորոնավիրուսային համաճարակը (Covid-19) արագացրեց փոփոխությունները. Նորամուծություններ ծնողների հետ աշխատանքում. Իսրայել

- ▶ Իսրայելի ընտանեկան խնամքի «Տիպատ Հալավ» կենտրոններում (Tipat Halav - family care centers) բուժքույրերը նպաստում են դրական ծնողավարմանը:
- ▶ Ի պատասխան COVID-19-ի «Իսրայելի բուժքույրերի առաջնորդության ծրագիրը» նորամուծություններ մշակեց:
- ▶ Տեղական մակարդակով առցանց ծառայությունների փորձարկումը հիմք կհանդիսանա համապատասխան մակարդակով ծրագիրն ընդլայնելու համար:

## Մայա Յաարի

*«Հետապոստություններ  
և գնահատում»  
Տնօրեն  
Գոշեն, Իսրայել*

**Կովիդ-19 համավարակը սկսվեց «Իսրայելի բուժքույրերի առաջնորդության ծրագրի» համար ամենաանհարմար ժամանակ: Մենք համարյա ավարտում էինք առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացվող բավմանյա ծրագրի առաջին փուլը: Ծրագրի նպատակն է վարգացնել «Տիպատ Հալավ» ծառայությունների (վաղ մանկության առողջապահական կենտրոններ) հնարավորությունները՝ ծնողների պահանջները բավարարելու և դրական ծնողավարման հմտությունները խթանելու համար: Ծրագիրը նպատակ էր դրել ձևավորել առաջատարների մի խումբ, ովքեր կարող էին փորձարկել ծառայության կողմից մշակված նորարարություններն ու փոփոխությունները:**

## Իդիթ Շուման-Ադատտ

*Հիմնադիր գործընկեր  
Լոթեն, Իսրայել*

Ծրագրի երկրորդ փուլը պետք է դառնար «նորարարական լաբորատորիա», որի ընթացքում աշխատելու էինք բուժքույրերի խմբի հետ «դիվայն-մտածողություն» (Design Thinking) մեթոդով «Տիպատ Հալավի» համար ծնողավարման դրական վարքագծի խթանման նորարարական ուղիներ մշակելու նպատակով: Քանի որ համաճարակը ստիպեց չեղարկել դեմ առ դեմ հանդիպումները, մենք երկընտրանքի առջև կանգնեցինք: Մի կողմից պետք էր, որ շատ կարևոր է ծրագրի ընթացքի շարունակականության պահպանումը, մյուս կողմից նաև հասկանում էինք, որ «նորարարական լաբորատորիան» անձնական հանդիպումներ է ելնադրում: Մեզ համար դժվար էր պատկերացնել, որ այդ աշխատանքը նույն հաջողությամբ կարող էր նաև առցանց կապակերպվել:

Մենք նաև գիտակցում էինք, որ մասնակիցները՝ որպես հանրային առողջապահության բուժքույրեր, համավարակի շրջապատույտի կենտրոնում կլինեին և նրանց համար դժվար կլինեին կենտրոնանալ և ներգրավվել ծրագրի աշխատանքներում: «Տիպատ Հալավ» կենտրոնները բաց էին համաճարակային սահմանափակումների ողջ ընթացքում, մինչդեռ համայնքային ծառայությունների մեծ մասը չէր աշխատում: Բուժքույրերին հանձնարարվել էր կրճատել դեմ առ դեմ հանդիպումները և նվազագույն մակարդակով իրականացնել միայն նորածինների վնասումներն ու պատվաստումները և, ըստ անհրաժեշտության, օգտագործել հաղորդակցության և տեղեկատվության այլ ձևեր:

Փոխարենը որոշեցինք բուժքույրերի համար վեբինարների մի շարք սկսել՝ համաճարակի ընթացքում իրենց աշխատանքի յուրահատուկ դժվարություններին առնչվող թեմաներով: Ինչպես արդյունավետ համագործակցել ծնողների հետ, երբ այցելությունները կարճատև են, իսկ ծնողները լարված ու մեկուսացած: Ինչպես կառավարել սթրեսը և անորոշության պահանջները: Ինչպես հոգ տանել ինքը քո մասին: Ինչպես լուծել աղմկի նիստրատիվ խնդիրները: Այս հանդիպումների ընթացքում մենք գիտելիքների ու հմտությունների հետ մեկտեղ ժամանակ տրամադրեցինք, որպեսզի մասնակիցները կարողանան վերլուծել սեփական աշխատանքը՝ աջակցելով մեկը մյուսին: Մասնակցությունը կամավոր էր. հանդիպում էինք կամ աշխատանքային ժամերին, կամ երեկոյան: Եվ մասնակցության տոկոսը, և ներգրավվածությունը բավականին բարձր էին:

## Հանդիպումներ ծնողների հետ ZOOM հարթակում

Առցանց հանդիպումների այս փորձառությունից հետո բուժքույրերից մեկը մտածեց, որ կարող է նպատակահարմար լինել նման հարթակն օգտագործել նաև մայրերի խմբերի հետ հանդիպումների համար, որոնք սովորաբար կազմակերպվում էին բժշկական կենտրոնում: Նա մի շարք առցանց հանդիպումներ անցկացրեց երիտասարդ մայրերի համար, որոնք ջերմ և դրական արձագանքներ ստացան: Մասնակիցները, որոնք մեկուսացած էին իրենց ընտանիքներից և համայնքային աջակցության համակարգերից, հասկապես չլիման, ուղղորդման և աջակցության կարիք ունեին:

Մի քանի շաբաթվա ընթացքում նախաձեռնությանը միացան շրջանի այլ բուժքույրեր, ինչպես նաև այլ տարածաշրջանների բուժքույրեր ու բժշկական կենտրոնների ղեկավարներ: Աստիճանաբար մեծանում էր ծնողական խմբերի քանակը, ում համար կազմակերպվում էին առցանց հանդիպումներ, որոնք առցանց վեբինարների, հանդիպումների և թերապիայի ավելի ընդգրկուն ծրագրի մի մասն էին կազմում: Հանդիպումները սովորաբար որոշակի կառուցվածք ունեին և ընդգրկում էին թեմաների լայն շրջանակ, ինչպիսիք են ծնող-երեխա կապվածությունը, կրծքով կերակրումը, երեխաների պարզացման խթանումը խաղի միջոցով, կոշտ սննդի ներմուծումը, նույնիսկ առաջին օգնության դասընթացներ էին կազմակերպվում:

Երբ վեբինարների ընթացքում բուժքույրերը խոսում էին ZOOM-ի միջոցով ծնողական խմբերի հետ իրենց աշխատանքի մասին, հասկացանք, որ այս ծառայության համար էապես կարևոր մի ուղղություն վարձացնելու հնարավորություն կա անկախ համաճարակի ընթացքից: Ծրագրի հետ համագործակցող հիմնադրամների և առողջապահության նախարարության մեր գործընկերների հետ քննարկեցինք տեղական նախաձեռնությունը ընդլայնելու հնարավորությունը և ստացանք նրանց աջակցությունը:

Ծրագրին մասնակցող բուժքույրերին հրավիրեցինք միանալու այս նախաձեռնությանը, նրանցից ավելի քան 20-ը միացան մեզ: Մենք նրանց առաջարկեցինք խմբերի հետ առցանց աշխատելու արագացված դասընթացներ, ինչպես նաև ապահովեցինք շարունակական տեխնիկական աջակցություն և օգնություն բովանդակության մշակման ու վերահսկման հարցերում:



Photo: Kateryna/Adobe Stock (adjusted)

Ընթացքում խոչընդոտներ եղան, և ծրագրերը մի քանի անգամ փոխվեցին, բայց մենք բուժքույրերի հետ աշխատեցինք բովանդակության մշակման վրա, և նրանք այժմ պարբերաբար առցանց հանդիպումներ են անցկացնում ծնողների խմբերի հետ: Եթե այս փորձնական ծրագիրը շարունակի հաջող արդյունքներ ունենալ, սա լրացուցիչ հիմնավորում կլինի կառավարության համար, որ ներդրումներ անեն հեռա-առողջապահական ոլորտում՝ որպես «Տիպատ Հալավի» լրացուցիչ ծառայություն:

### Փոփոխությունների ընթացքից քաղած դասեր

«Տիպատ Հալավի» կողմից մատուցվող որոշ ծառայությունների թվայնացման հարցը, ի պատասխան ծնողների բավաճախի դիմումների, արդեն երկար ժամանակ նախարարության օրակարգում էր: Սակայն միշտ էլ քաղաքական, վարչական և տեխնիկական խոչընդոտներ կային, որոնք դժվար էր հաղթահարել: Օրինակ՝ որոշ կենտրոններ չունեին բարձրորակ ինտերնետային կապ, այդ պատճառով էլ համավարակի ընթացքում ZOOM-ով աշխատող բուժքույրերի մեծ մասն աշխատանքը կապակերպում էր տանից: Ծրագիրը ֆինանսավորեց փորձնական փուլում ընդգրկված բուժքույրերի համար պլանշետների ձեռքբերումը, որը տվյալ դեպքում կարճաժամկետ տեխնոլոգիական լուծում էր: Այդ ընթացքում առողջապահության նախարարությունն աշխատում էր կենտրոնները միմյանց հետ կապելու և երկարաժամկետ լուծումներ մշակելու համար՝ Իսրայելի այլ առողջապահական կապակերպությունների կողմից օգտագործվող առցանց հարթակի հիման վրա:

COVID-19-ի հետ կապված ճգնաժամի հետևանքով տեղական մակարդակում իրականացված փորձարկումներն անսպասելիորեն արագացրեցին փոփոխությունների ընթացքը, որոնք պլանավորված էին ավելի ուշ ժամանակի համար: Դրանց միջոցով մենք սովորեցինք, թե ինչպես կառավարել նորարարությունների ու փոփոխությունների ընթացքը:

Մենք տեսանք համայնքների և տարածաշրջանների տարբերությունները առկա ռեսուրսների, ձկնուղիների և նորարարական ոգու տեսանկյունից: Մենք հասկացանք, որ ավելի հեշտ և արդյունավետ է տեղերում աշխատել նորարար և ունակ համայնքների հետ, քան աշխատանք ծավալել համազգային մակարդակով: Մենք համոզվեցինք, որ տեղերում աշխատող մարդկանց հաջողություններն ավելի նկատելի են, քան ամբողջ երկրի մասշտաբով կենտրոնացված աշխատանքների դեպքում: Բայց որպեսզի տեղական նորարարություններն ավելի լայն մասշտաբով հաջողության հասնեն, անհրաժեշտ է, որ ղեկավարությունը կենտրոնացված աշխատի: Տեղական համայնքներում աշխատող մարդիկ կարող են ձանձապարի բացել ավելի բարձրաստիճան գործիչների համար, ովքեր հետագայում կարող են միանալ նրանց:

Եթե նայենք ընդհանուր պատկերին, ապա պարզ կդառնա, որ «Իսրայելի բուժքույրերի առաջնորդության ծրագրի» առաջին փուլի հաջողությունը նույնպես նշանակալի դեր խաղաց և նպաստավոր պայմաններ ստեղծեց փոփոխությունների համար: Համեմատաբար կարճ ժամանակում մենք ստեղծեցինք լավ պատրաստված և շահագրգիռ մասնագետների ուժեղ խումբ: Միասին սովորելու ընթացքում նրանք ձեռք բերեցին ընդհանուր մտածելակերպ և մոտեցումներ: Նրանք ոգևորված էին, նվիրված և նույնիսկ մեկուսացման և սահմանափակումների պայմաններում ցանկանում էին պահպանել կապը միմյանց հետ: Պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ ծրագրին հաջողվեց արժանանալ հանրային առողջապահական ծառայությունների և բուժքույրական վարչակազմի վստահությանը, ուստի նրանք ուրախ էին, որ մենք կարողանում ենք ինքնուրույն աշխատել: Սա ցայտուն օրինակ է այն բանի, թե ինչպես ճիշտ հարաբերություններ կառուցելով կարող ենք նաև ձկուն դառնալ ճգնաժամային իրավիճակներում:

Ի վերջո, մենք սովորեցինք չթերագնահատել հնարավոր ձեռքբերումները: Երբ սկսվեց COVID-19 համավարակը, մտածում էինք, որ անհնար է առցանց ձևաչափով ծրագիր իրականացնել, բայց այն ոչ միայն հաջողվեց, այլ նաև խթանեց նորարարական մոտեցումների ներդրումը դրական ծնողավարման վարքագծի խրախուսման ուղիների մշակման հարցում:

**Երբ վեբինարների ընթացքում բուժքույրերը խոսում էին ZOOM-ի միջոցով ծնողական խմբերի հետ իրենց աշխատանքի մասին, հասկացանք, որ այս ծառայության համար էապես կարևոր մի ուղղություն կարգացնելու հնարավորություն կա՝ անկախ համաճարակի ընթացքից:**

### ➔ Գտեք այս հոդվածը առցանց [earlychildhoodmatters.online/2020-25](https://earlychildhoodmatters.online/2020-25)

«Վար մանկության կրթության խնդիրները» ամսագրում տպագրված «Կլիմայական փոփոխությունները և վաղ մանկության կարգացումը. գտնել լավագույն համադրությունը» հոդվածի հայերեն հրատարակումը իրականացվել է Բեռնար վան Լիր Հիմնադրամի և «Քայլ առ քայլ միջազգային ընկերակցության» (ՄԸ) գործընկերային նախաձեռնությամբ և համագործակցելով «Քայլ առ քայլ ՄԸ» անդամ Հայաստանի «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ:

